

**ՀԱՍԱՐ-ԲԱՍԱՐՆ ՈՒ ՔՈՌԻ ՏՂԱ ՓԻԼՈՍՈՎ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII /
Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)**

Ելել ա, չի էլել մի թագավոր, ունեցել ա մի կնիկ, օխտը տղա, եղ տղերանց քիր չի էլել:
Էղ թագավորը մեռել ա, էս կնիկը մնացել ա ոռֆերի: Դա զնացել ա մի դևու հետ մի
անդրամութեն արել, երկուֆուսացեր ա:

Եղ կնգա վատենին մոռացել ա, իր պուճուր տղեն զնացել ա հանդը ասել ա.— Նանի՝, էսօր թե
ազատվես՝ թե աղջիկ բերես, ջան հրեն կդնես կտերը, թե տղա բերես, եզան լուծը կդնես կտերը:
Եղ կնիկը ազատվում, բերում ա մի աղջիկ, ջահրեն տանում ա դնում կտերը:

Էղ տղեն մտիկ ա անում, տենում, որ մերը ազատվել ա, աղջիկ բերել, ջահրեն կտրեն ա դրել:
Ուրախանալով էկել ա տունը: Մանուկը ութ օրական ա դառել, բերել են օխտը ընզնանին դրել
են կրակին, դրւ են էն կն ում մեծարքի՝ հարևաններին կանչելու, որ «Կնունք ենք անում, մեր
քիրը կնքում ենք»:

Էկան տեսան, որ էղ պղինձներում ոչ մինումն էլ կերակուր չկա, պղինձները դատարկված վեր
դրած են:

Էս խալխը, սա ասավ՝ «Էս ո՞նց էլավ», նա ասավ. «Էս ո՞նց էլավ. Էս ի՞նչ բան էր, որ խորակը
հատավ, պղնձնում կա ոչ»:

Էղ պուճուր տղեն հնարով էր, ասավ.— Ես լավ գիտեմ, էս բեխեն իմ հորիցը չի, էս տուն էլ
ուրիշ էկող չի լել, էս բեխեն Դնից ա:

Տղեն զնաց տեհավ, որ բեխեն շատ մենձացել ա բարուրի միջին. զնաց եղ քաշեց, տեհավ, որ էն
պղնձի շիլափլավից բեխի պղոշների վրա կպած ա:

Պուճուր տղեն էս որ տեհավ, ասավ.— Նանի՝, հացը դիր ուտեմ, էս զնում եմ մի երկրի վրա:
Մերը ասավ.— Զա ո էրթաս, ջհանդա մը: Զկել հիմի՝ վայ մի քիր, վայ մի քիր, հիմի քիրն
էլավ՝ վեր էս կենում կորչես, դպորն դինը ուզում էս, կորի:

Ասում ա.— Նանի՝, ինձանե ինչ ես նեղանում, իմ հոր ապրուստն էլ իմ վեց ախակերն էլ քեզ,
իմ տուն ու տեղն էլ քեզ, ես զնում եմ,— ասում ա,— մի երկրի վրա:

Վեր կացավ դա զնաց մի աշխարի վրա: Էղ բարուրը մենձացավ, էղ աշխարում ինչ ջին-ջանլու
կար, ինչ ֆողի իրեխին ման էկող կար՝ կերավ, թամիզ կերավ, էթող մի դարբին:

Էս տղեն զնաց տեհավ, որ մի դզում չորան՝ էրկու աչքերը հանած. տեհավ, որ մի ոչխարն արել
ա մի կածան, էղ ոչխարը կարմնջի պես շեղք արել, ինքը շխտում ա, ասում ա.— Զու լիստ,
զու լիստ, մին էլ զու լիստ:

Որ ջխտում ա, էղ տղեն ոչխարի հետ անց ա կենում: Զեռն ա տալի, տենում ա, որ ոչխարի հետ
մի ջանլու անցկացավ:

Ասում ա.— Ի՞նչ ես. ջինս ես, որ ձեռքիս տակովն անց կացրուց: Աստված սիրող, ինչ որ իր՝ լիս
ընկի, լիս ընկի տենամ, ի՞նչ ջանլու ես:

Ասում ա.— Հայրի՝ է, ես եմ, թե կունդունես՝ քի տղա ըլիմ ես:

Ասում ա.— Խի՞ չեմ ունդունի, որ քի պես որթի դա, էրկու աչք ունեմ, էս էլ կուր, ինչպես ս քի
չեմ ունդունի:

Իրիկուն ոչխարի հետ գալիս են էղ կուր մարթու տուն:

Ըոավոտը որ ոչխարը դուրս են անում, ասում ա.— Որթի՝, ո՞նչ Մենձասարի վրա կանես, ո՞նչ
Պուճուր, մեկել ո՞ր հանդի վրա կուզես՝ տա ր:

Ասում ա.— Ինչպես ս էս սարերի վրա տանիմ ոչ:

Ասում ա.— Ես քեզ ասում եմ, որ տանիս ոչ:

Ասում ա.— Որ ասել ես, ես էլ տանիլ չեմ:

Էդ չոքանին խափում ա: Էդ օրը ոչխարը տանում ա Պուճուր սարի վրա: Ոչխարը գնում ա էդ սարի վրա արոտ անում:

Խամ սա թ, որ դուշն էլ էդ սարերով չի անցկացել, մեկ էլ տեսնում ա, որ մի աղջիկ դուրս էկավ:

Ասում ա.— Ախավե՛ր, արի ըստեղ, զլուխող քթվեմ:

Ասում ա.— Գնալ պտիմ, տենամ սա ինձ ի՞նչ կանի, նա մի աղջիկ, ես մի տղամարդ, տենամ ինձ ի՞նչ կանի դա:

Գնաց կուշտը:

Ասավ.— Ի՞նչ ես ասում:

Ասավ.— Ախավե՛ր, նստիր զլուխող քթվեմ, իմ ախավոր նման ես:

Գլուխոր դրուց գոքումը: Ես աղջիկն ունի է՛լ հընկերտինք. Էդ տղին խափում ա, մթամ թե զլուխոր քթվում ա, բայց խափում ա, էն մեկել քորը դի ա տալի.— Ախավ, քըլփաթինը բիր, քլփաթինը, մաշես տո ւ:

Ես տղեն հսկացավ, որ դա ինչ ա ուզում անիլ: Վեր կացավ, տեհավ էն մեկ աղջիկը քալփաթինը բերուց:

Ասավ.— Անզգա՝ մ, հորս աչքերն էլ էդպես եք հանել,— ասեց ու վեր ջարդեց:

Սրանք մինարվեցին, ասին թե.— Քու հոր աչքերը քեզ կըտանք, մեզ տանիլ մի՛, մեզ ծեծիլ մի՛: Սա անկանց չարավ, հոր աչքերը առավ սրանցից, սրանց աղաք արավ ոչխարի հետ, ամեն բան, հնարները խլեց, բերուց իրիկունը հոր կուշտը:

Ասում ա.— Ոնց որ հորս աչքերը հանիլ էք, էնպես էլ դրեք տեղը, շինեցեք:

Հոր աչքերը դրին տեղը:

Ըոավոտը հերը դուրս էկավ, ասեց.— Որթի՛, ինձ անկանց արա, Պուճուր սարի վյա տարար,

Մենձ սարի վրա տանես ոչ:

Դա էլի խափեց դրան:

— Չեմ տանիլ,— ասավ:

Գցեց Մենձ սարի վրա ոչխարը:

Էդ աղջկերանց թլըսմի ճիպոտը ձերին գնաց, որ ոչխարը արոտն արավ, մեկ էլ տեհավ, որ մի Վուշար ա զալի ներքի պոռշը գետնին քաշ ա տալի, վերի պոռշը ծնկներին տալի:

Վուշարն ասում ա չոքանին.— Ղուշն իր թևով, օձն իր պորտով էս սարը չէ էկել, իսան-օղլի, դու քանի՝ զիխանի ես, որ էկել ես էս սարը:

Ասում ա.— Նամարդութենը մի բան չի, համեցեք զոմարդութենով բռնենք:

Էն ժամանակ Վուշարի տեղին հասնելու հաղաղ էդ աղջկերանց քալփաթինով տղեն Վուշարի աչքերը հանեց: Մեկ էլ, որ թլըսմի ջիբութը վրա բերուց, թլացավ Վուշարը: Էն ժամանակը նետ ու անեղը քաշեց Վուշարին կտորեց: Գնաց տեհավ, որ էն Վուշարը մի զուխտ Հասար-

Բասար¹ մի ջրդացաքարից կապել ա:

Էդ Հասար-Բասարը ճրդացքարի և ոչխարի հետը քշեց, ոչխարի հետը բիրուց, էկավ հոր կուշտը: Ըոավոտը լիսացավ:

Ասավ.— Այ հեր, Մենձ սարն էլ բաց արի, Պուճուր սարն էլ բաց արի, էլ էլ քու դուլուտչքերը, բդաքիդ քոծերը: Ես գնամ մին իմ հոր վեյաթի վրա: Ամա,— ասում ա,— որ իմ տեղը նեղվի, էդ Հասար-Բասարնին դես-դեն կձգձգատեն, էն ժամանակ իմացիր, որ իմ տեղը նեղ ա, վեր կրողուս գան:

¹ Երևակայական կենդանի—Ծ. Բ.:

Էղ տղեն ձիուն վեր ըլում, գնում է իր հոր շենլիքը: Մտիկ ա անում էն աղջիկ, էն վուշաբ աղջիկ, որ վելյաթը կերել պրծել չի, որ մի մըլակի պես բան զալիս ա դրբա դրան դու ա ըլում: Գնում ա տեսնում, ա յ իր ախապերը. հենց հասնելու քիմի ձիու մի ոտք կուլ ա տալի:

Ասում ա.— Ախապե՛ր, ձիդ իրեք ոտնանի ա :

Ախապերն ասում ա.— Հա՛, քիր ա ջան:

Քիրը ձիի մի ոտն էլ ա կուլ տալի, ասում ա.— Ախապեր, ձիդ երկու ոտնանի էկավ:

Ասում ա.— Հա՛, քիրա ջան:

Մինն էլ ա կուլ տալի:

Ասավ.— Ախապե՛ր, ձիդ թագոտնանի է էկել:

Ասավ.— Հա՛, քիրա ջան:

Մի ոտն էլ կերավ ձիու:

Ասավ.— Ախապե՛ր, ձիդ փորսո՞ն ա էկել:

Ասավ.— Հա՛, քիրա ջան:

Զին թամիզ կուլ տվուց, մնաց անձի:

Ասավ.— Ախապե՛ր, հետավակ էկա թ:

Ասավ.— Հա՛, քիրա ջան:

Ասավ.— Ախապե՛ր, դուն պիտի սազ ածես, կըստերը սազ ածա, ես էրթամ քեզ համար կըրակուր պատրաստեմ:

Սա գնաց դարբնին ատամները սրել տալու:

Տղի կշտին կրտըրիցը մի մուկ դուրս էկավ:

Մուկն ասավ.— Ա յ տնաքանդ, նա քեզ համար կերակուր էփելու չի գնացել, գնացել ա, որ դամըրչուն ըտամները սրել տա, զալ պտի քեզ ուտի:

Տղան ասավ.— Բա ի նչ անեմ:

Ասավ.— Սաբոկները հանի ֆողով լըքըրու, կտրիցը կախ արա, առ,— ասավ,— էս մի ճրազը ձեթով լիքը, առ էս մի սրոցը, քարե սրոցը առ,— ասավ,— էս մի գլուխ սանդրելու սանդրը, առ,— ասավ,— էս մի ջուխտ մոմը:

Ասավ.— Որ էս բոլորը տվիր, նրանց հունարը ասա, ես ո՞նց անեմ:

Մուկն ասավ.— Եղնուցը որ տենաս հասավ, առաջը սրոցը վեր զցի, եղի անզամը, որ տենաս հասավ, սանդրը վեր զցի, գնա, նըրանից եղը, որ տենաս հասավ, էն մի ճրազ ձեթը վեր զցի գնա: Նըրանից եղը, երբ տենաս տեղդ նեղ ա՝ մոմը վեր զցի:

Մուկն ասավ.— Դե ինձ տուր չոնքուր, դու փախիր, կորիր:

Դա փախավ, կորավ:

Քիրն էկավ տանը տեհավ սաբոկները ընդի ա, Մուկն էլ սազն ա ածում, նա գիտի, թե ախապերն ընդի ա, գիտի ոչ, թե փախել ա:

Ասում ա.— Ախապեր, դրվեր արի: Կերակուր եմ պատրաստել, դրվեր արի, հաց ուտենք:

Մուկը ընդի սազն ածում, ծընկծնկացնում ա:

Մեկ էլ ոի է տալի, ասում ա.— Ախապե՛ր, դրվեր արի, թե չէ դրվեր եմ բերում, իսի՞ չես դրվեր զալի:

Մազար, որ ջիզոր զալիս ա, քաշում ա սաբոկները, ֆողն աչքերն ա դառնում, տեսնում ա, որ աղբեր չկա:

Մուկը ընդի ածում, ծընկծնկացնում ա, ինքն աչքերը ըղաղում ա, աչքերը իստակում ա, որ կըսուր պըսի դուրս ըլի, գիտի թե աղբերն ընդի ա, թիքա-թիքա պիտի անի:

Գնաց կտուրը դուրս էլավ: Գնաց կրտուրը, դուրս ըլելու բաշ, Մուկը սազը վրա արավ ու փախսավ: Դա էն մկի ծակը քանդեց, դես արավ, դեն արավ, տեհավ, որ աղբերը գնացել ա, աղբեր չկա ընդի:

Էղ ժամանակ կրտերը նստավ, միտք արավ, որ աղբերը փախել ա, դա ըղլու էլավ աղբոր եղնուց: Գնաց հասվե հաս էլավ:

Աղբերը, եղ մտիկ արավ, տեհավ մի դըշի կատար գալիս ա: Մըխելի էլ գնաց, եղ դարձավ տեհավ, որ իսան ա:

Մին էլ եղ մտիկ արավ, տեհավ, որ հա՛, հա՛ հասնում ա: Սրոցը վեր զցեց: Դառավ սալկութ, անցկենալու չի, աղբերն էն կռանը մնաց, քիրն էլ՝ էս կռանը:

Ասավ.— Աղբե՛ ր, աղբե՛ ր, դրվո՞րն անցկացար, դրվո՞րն անցկացար:

Ասավ.— Ոնց ես եմ անցկացել, դու էլ հընե անց կաց, ես ի՞նչ անեմ:

Չըկելը գըռփրշտորեց, չըկելը տանջեց, նա անցկացավ, խելի գնաց:

Տղան մին էլ եղ մտիկ արավ, տեհավ, որ մի ճանճի դրտար գալիս ա, մին էլ եղ արավ, տեհավ, որ մի դըշի կատար գալիս ա:

Մին էլ եղ դարձավ եղ, տեհավ, որ մի իսանի դատար գալիս ա:

Մեկ էլ եղ արավ, տեհավ, որ հա հասել ա, հասվե հաս է եղել: Սանդրը վեր զցեց, դառավ ծմակ Ճնճըխոտ:

Ասավ.— Աղբեր, աղբեր, դրվո՞րն անց կացար, ինձ էլ ճանապարհ շանց տուր, ես էլ գամ:

Ասավ.— Ես ոնց որ անց եմ կացել, դու էլ անց կաց, ես ի՞նչ անեմ:

Մեկ էլ մտիկ արավ, տեհավ, որ գալիս ա, մին էլ եղ մտիկ արավ, տեհավ հասվեհաս ա, ճրագը վեր զցեց, դառավ ծով, ճրագը մեջին ճրդացքար:

Ասավ.— Աղբե՛ ր, աղբե՛ ր, դրվո՞րն անցկացար, դրվո՞րն անցկացար:

Ասավ.— Ճրդացքարը ճիտդ զցի, ճիտդ զցի, կարոդ էս գալ:

Ճրդացքարը զցեց ճիտը, տարավ ծովի տակը, մեկ էլ առավ գըլուխը, մին տակն ընկավ, մին կրեսը չկել չարչարվեց տղեն խելի գնաց:

Վուշաբն էկավ ծովուց դուրս էլավ:

Մին էլ եղ մտիկ արավ, տեհավ, որ դալիս ա, մին էլ եղ մտիկ արավ, որ հասվե հաս ա: Մին էլ որ մոմը վեր զցեց, մոմը դառավ մի ջուխտ չինարի ծառ: Տղեն մի ծառի ծերին, էղ Վուշապը հասավ մի ծառը կոծեց, որ շատ կոծեց, էղ տղեն տեհավ, որ էղ ծառը վեր ա ընկնում, թռավ ելավ մընի ծերը:

Նրա հերն վեր չթողուց Հասար-Բասարը՝ Հասար-Բասարը ջրդացքարը քաշ տալով էկավ-էկավ տեհավ, որ էղ ծառը հա, էն կերել ա, որ վեր ընկնի, դեր տղին հասնի:

Տղեն ասավ.— Հասար-Բասար, հասար մուրազիս, նրան հենց հուփ տուր, հենց կուլ տուր, որ դրան մի պուտ արուն վեր չընկնի:

Դրանք որ հուփ տվին, կուլ տվին, ամենքը մի կոնիցը, որ բռնեցին, իրար վրա քաշեցին, դրանից մի պուտ արինը գետին կաթեց:

Գետնի երեսից արինը ասեց.— Աղբե՛ ր, վեր ունիս փեշմանիս, թե վեր դնես՝ փոշմանիս:

Էղ աղբերն ասավ.— Էղ մի պուտ արինը ինձ ի՞նչ պըտի անի: Չըլա վեր ունիմ, տենիմ էս արինն ինձ ի՞նչ պըտ անի:

Վե կալավ տերեսի վրա, պլոլեց դրուց շոբը: Հասար-Բասարն եղ արավ ընկավ ճամփա:

Էղ պուտ արինը տղի անդամը ծակեց, ծծեց, նի մտավ: Էղ տղեն դնաց ճամբին մի բազրգան ուստ էկավ, օխտը հակ դաթիր ուսկի բառցած: Էղ Հասար-Բասարը բազրգանի աչքին խիստ դժար էկան:

Ասավ.— Աղքեր,— իր ձեռին մի փետ կար,— թե էս փետի անունը գտնե՞ս, իմ օխտը հակ բարձած դարձիրը խազինի հետ քեզ ըլլի, թե գտնիս ոչ, քո Հասար-Բասարը ինձ ըլի:

Էղ պուտ արինը ջիբեն ասավ.— Աղքե՛ք թ, ասա շիմշիրի ա, շիմշիրի ա:

Տղեն ասավ.— Աղքե՛ք թ, ի՞նչ դես դեն ման զամ, եդ ա փետիդ անունը շիմշիրի ա:

Փետի անունը գտավ, օխտը դարձներ բարձած ուսկին իրան տարավ:
Որ եդ դարձրներն աղաք տարան զնացին, մի պուտ արինը չերից էնքան ծծել էր, որ էն մեկ անգամ չոլախցրել էր:

ՀասարԲասարը տղին ասին.— Կանգնի:

Բաց արին տեհան, որ անդամը բարբանդ ա դառել, էնքան լիզեցին Հասար-Բասարը, լեղուն միջիցը հանեցին:

Գնաց հասավ տուն:

Ասեց.— Ճեր, քեզ ասի, որ Հասար-Բասարը երբ կձգձգացին, վեր թող զա, իմացի, որ իմ տեղը ներ ա: Մուխաննաթ էիր, որ անլիզու անասունի դդար էիրիբար չունեիր, որ վեր թողնեիր զային, քո կուր աչքերը ես սղացրի, քո դդուշաց սարիրը ես բաց արի:

Ասեց.— Ես հեշ զիսի չեմ էլել, հասկացել չեմ:

Տղի բերած ուսկին բերին, օխտն օր, օխտն զիշեր հրսանիք արավ, կերան, խմեցին, քեփ արին:

Նրանք հասան իրենց մուրազին, դուն էլ հասնես քո մուրազին:

Աստուծանից իրեք խնձոր վեր ընկավ, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարհին: